ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Դեղձուտ, Ե. Չարենցի 21

ՈՐՈՇՈՒՄ N13-Ն

26 նոեմբերի 2013թվական

„ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին

Որոշում է՝

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2013թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

Հիմնական օբեկների համար՝

1/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործա-կան /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարա-կական և արտադրական նշանակության օբեկտների համար -10 000 դրամ

2/ սույն կետի <<1.1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ մակերես ունեցող օբյեկտների համար -20 000 դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 40 000 դրամ

գ. 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50 000 դրամ

դ. 3001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 100000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար -3 000 դրամ

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -5 000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացան աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա - շինարարական նախագծով՝

- չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն - 3 000դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է - 2000դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 5 000դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանճյուր եռամսյակի համար՝ -5 000դրամ

5. Համայնքի տարածքում բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա 1քմ-ի համար սահմանվում է - 100դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար - 25 000դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50 000դրամ

3/ բաղնիքների /սաունաների/ համար - 200 000դրամ

4/ խաղատների կազմակերպման համար - 500 000դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000դրամ

Տեղական վճարներ

8. Համայնքի տարածքում շինարարություն կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 1 000դրամ

9.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 1000 դրամ

10.Գյուղապետարանի կողմից մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսե րի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվում է փոխհատուցման վճար - 1000 դրամ

11.Համայնքի տարածքում աղբահանություն իրականացնելու նպատակով իրականացվող աշխատանքների դիմաց համայնքի յուրաքանչյուր անդամից գանձվում է փոխհատուցման վճար -10 դրամ

Որոշման 1; 2; 3 ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

N 13-Ն Որոշումն ընդունված է

Ավագանու անդամներ՝ Հ. Հակոբյանը

Յ. Մովսիսյանը

Ա. Նազարյանը

Ս. Շահբազյանը

Հ. Շահբազյանը

Դեղձուտ համայնքի ղեկավար՝ /Յ. Մուրադյան/